

սողջապահության համար, Հաջողությանը զարգանում է տնտեսական ու բարեկամական փոխզեռությանը: Ազդրեղանի և եղբայրական մյուս տեսությունների միջև, հատկապես սերտ կապեր են ստեղծվել Սովետական Ռուսաստանի և Սովետական Ազդրեղանի միջև: Ազդրեղանի մայրաքաղաք Բաքվից սոցիալիստական դեմոկրատիայի երկրներն են ուղարկվում տրոյսնարերական բազմաթիվ արտադրանքներ:

Ահա այս խոշոր նվաճումների համար, և ելնով Ռուսաստանի կազմի մեջ Ազդրեղանի մանկու 150-ամյա հոբելյանը, ՍՄԽ Գերագույն սովետի հրամանագրով, տեսությունների պարգևատրվեց լենինի շքանշանով:

Ռուսաստանի կազմի մեջ Ազդրեղանի մյուս 150-ամյակին էլ նվիրված ՍՄԽ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի ու տեսությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության ամբիոնների

րի համառոտ հոբելյանական գիտական նստաշրջանը, որ կայացավ այս տարվա մայիսի 22-ին:

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀԿՊ Կենտկոմի երկրորդ քարտուղար Հ. Բազդասարյանը: Այնուհետև զեկուցումներով հանդես եկան ՀՍՄԽ գիտությունների ակադեմիայի իզմակից-անդամ Մ. Աղայանը («Ռուսաստանի կազմի մեջ Ազդրեղանի մանկու պատմական նշանակությունը»), ՍՄԽ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ազդրեղանական ֆիլիալի սեկտորի վարիչ Ա. Ասադովը («Սովետական Ազդրեղանի ՍՄԽ մոնոպոլիզացիայի եղբայրական բնույթը»), պրոֆ. Ջ. Գրիգորյանը («Ռուսաստանի կազմի մեջ Անդրկովկասի մանկու հարցի լուսարանումը սովետական պատմագիտության մեջ») և գուցենա ի. Բարսեղյանը («Անդրկովկասի բուշկվիկյան կազմակերպությունների ինտերնացիոնալ տրագիդիաները»):

Հ. ՕՂԱՆՅԱՆ

ՇԵՔՍՊԻՐԻ ԾՆՆԻՅԱՆ 400-ԱՄՅԱԿԸ

Այս տարվա ապրիլին հուգոյություն համալեռհային խորհրդի որոշմամբ լայնորեն նշվեց անգլիական հանճարեղ պոետ-դրամատուրգ, մեծ հումանիստ և փիլիսոփա Վիլյամ Շեքսպիրի ծննդյան 400-ամյակը:

Շեքսպիրը բացառիկ, անկրկնելի երևույթ է ոչ միայն Վերածնության դարաշրջանի գրականության, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ: Շեքսպիրի ներդրումը մարդկությանը՝ զեղարվեստական գանձարանը բարձր ունիտատական արվեստն է, որով նա խորամուխ է եղել մարդու հոգեբանության մեջ, բացահայտել բուրժուական իրավակարգի սոցիալական հակասությունները, պայքարել անհատի ազատության համար, պաշտպանել մարդուն՝ հանուն մարդու թեև դարերի վաղեմություն ունի Շեքսպիրի գրական ժառանգությունը (37 պիես, 2 պոեմ, 154 սոնետ), սակայն նա դարերի խորքից չի նայում այսօրվա ընթերցողին ու հանդիսականին. այլ խոսում է նրա հետ որպես իսկական ժամանակակից: Յուրաքանչյուր դարաշրջան, ամեն մի ժողովուրդ Շեքսպիրի ստեղծագործության մեջ պատմական ճշմարտություն է տեսել, գտել է առաջադիմության պայքարի կրքառ պաշտպանին: Մարքսն ու էնգելսը, Գյոթեն ու Պուշկինը, Թուսանյանն ու Իսահակյանը Շեքսպիրին համարել են անհավասարելի մեծություն:

Վաղուց է, որ մեծ դրամատուրգի ժառանգությունը մտել է սովետական մշակույթի մեջ. նա միաժամանակ և մեզ է պատկանում, մեր բազմազգ միության ժողովուրդներին, այդ թվում և հայությանը: Ահա թե ինչու Շեքսպիրի հոբելյանը Հայաստանում առանձին շուրջ ու հանդիսավորությամբ անցավ: Այլ Սպենդիարյանի անվան թատրոնում տեղի ունեցավ հոբելյանական երեկո, Արվեստի ինստիտուտը կազմակերպեց գիտական սեսիա, երեկոներ կայացան գիտությունների ակադեմիայում, հայկական թատերական ընկերությունում, գրականության ինստիտուտում, զեղարվեստա-թատերական ինստիտուտում, հանրապետության մեջ շարք արդյունաբերական ձեռնարկություններում և այլն: Ե. Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգությունը, հրատարակվեցին Վ. Փափազյանի «Իմ Օթելլոն», Ռ. Ջարյանի «Աղամյանի Շեքսպիրը» (ուսանելն) աշխատությունները, «Շեքսպիրը հայ բեմում» նկարաշարը:

Սրանից հարյուր տարի առաջ հայերը խաղացել են «Մակբեթ», ճիշտ հարյուր տարի առաջ ծնվել է Շեքսպիրի մեծանուն հայ թարգմանիչ Հովհաննես Մասեհյանը: Եթե դրան ավելացնենք, որ անցյալ դարի 60-ական թթ. արդեն հրապարակի վրա էին «Համլետի», «Վենետիկի վաճառականի», «Ռոմեո և Ջուլիետի»

ամբողջական հայերեն թարգմանությունները, իսկ ութսուն տարի առաջ պրոֆեսիոնալ հայ բիմում կայացավ «Օթելլոյի» լրիվ բեմադրությունը, ապա ավելի պարզ կդառնա այն արտակարգ հետաքրքրությունը, որ հանդես բերեց հայ ժողովուրդը Շեքսպիրի ծննդյան 400-ամյակի տոնակատարության ժամանակ:

* * *

Նախ՝ հայերեն թարգմանությունների մասին: Շեքսպիրը սկզբում մեզ մոտ եկավ մաս առ մաս: Կայկաթայի «Շտեմարան» շարաթաթերթում 1821—1823 թթ. ի հայտ եկան խրատակներ, բարոյախոսական ասույթներ «Երկու վերջնացիր», «Համլետ» երկերից, ապա և 14 տող «Ամառային գիշերվա երազից»: Հետագայում, 1840-ական թթ., Մոսկվայի Հազարյան ձեռագրասրահի պրոֆեսոր Մկրտիչ Հմինը, այս անգամ իրեն ճարտասանության առարկայի նյութ, իր հայ ուսանողներին, ի թիվս այլ խոշոր գրողների, ծանոթացնում է նաև Շեքսպիրին, քաղվածքներ բերելով նրա մի շարք ողբերգություններից: 1853-ին և ապա 1860-ական թթ. Զմյուռնիայում Արամ Տետեյանի թարգմանությամբ առաջին անգամ աշխարհարար (արևմտահայերենով) լույս են տեսնում «Սխալների կատակերգություն», «Վենետիկի վաճառական», «Համլետ» ու «Ռեմեո և Զուլիետ» պիեսները, ինչպես նաև «Կտակը»: 1877-ին Վենետիկում հրատարակվում են «Մակբեթը»՝ լրիվ և հատվածներ «Հայնրիխ Սեյբորդ» քրոնիկոնից՝ Ա. Կասկանդիլյանի թարգմանությամբ, 1880 թ. Թիֆլիսում «Օթելլոն»՝ Ստ. Սուխանյանի և 1888 թ. Պետերբուրգում «Լիր թագավորը»՝ Ստ. Մալխասյանի թարգմանությամբ: Նույն 80-ական թթ., ոգևորված հայ հանձարեղ ողբերգակ Պ. Աղամյանի արվեստով, մեծանուն նկարիչ Վ. Սուրենյանցը թարգմանում է «Ռիշարդ Նորդ» ողբերգությունը (իսկ հետագայում՝ նաև այլ գործեր):

Այս, ինչպես նաև շեքսպիրյան այլ երկերի հայերեն երկան գալը ինքնին նախապատրաստեց Հովհ. Մասեհյանի հաղթական մուտքը թարգմանության ասպարեզ: 90-ական թթ. հրապարակ եկան նրա դասական թարգմանությունները: Մասեհյանի անդրանիկ թարգմանությունը («Համլետ») Հովհ. Թումանյանը համարել է «մի հանկարծակի թոխը»: Որինակներ բերելով Համլետի, Պոլոնիոսի, Լաներտի դիալոգներից, այնուհետև Թումանյանը հիացած քաջականչում է. «Տեսնո՞ւմ եք ինչ արժանավայել ճոխություն խոսում է հայոց լեզուն Դանիալի արքայազնի բերանում, ինչպե՞ս ուժով կարողանում է տալ Շեքսպիր կոշված տիտանի երկար շունչն ու մոռենչը»: Լի ստեղծագործա-

կան ավյունով, Մասեհյանը հետագայում հիմնովին վերամշակեց իր հայտնի թարգմանությունները և լրացրեց նրանց թիվը «Թիմոն Աթենացի», «Փոթորիկ», «Ջուր տեղը մեծ աղմուկ», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Հուլիոս Կեսար», «Կորիոլանո», որոնց մի մասը, իրերի դժբախտ բերումով, դեռևս հրապարակված չէ: Ավետիք Իսահակյանը Մասեհյանի թարգմանությունները անվանել է անթերի. կատարյալ: «Հավագույնը,—գրել է նա,—մենք չենք կարող ունենալ երկար ժամանակ, գուցե և ընգմիշտ, որովհետև դյուրին բան չէ գոտեմարտի բռնվել անդլո-սաքսոն հանձարի հետ»: «Պրոֆ. Նիկ. Մառը, որ գիտականորեն գիտե հայերենը,—շարունակում է Իսահակյանը,—կարդալով Մասեհյանի թարգմանությունները, անվերապահ զարմանք է հայտնել, թե Մասեհյանի շնորհիվ աշխարհարար մանուկ հայերենը ինչ ճոխության ու ձկունություն է հասել, որ անպակաս կերպով կարողացել է մի գծի վրա հավասար կանգնել Շեքսպիրի լեզվին՝ մի փոքրիկ, տրորված ազգի լեզու՝ մի մեծ, քաղաքակրթված ազգի լեզվի ընկեր»:

Թատրոնի խաղացանկի պահանջներից ելնելով, տարբեր ժամանակներում Շեքսպիրին թարգմանելու օգտակար փորձեր են կատարել նաև մի շարք դերասաններ (Գ. Զմյուռնյան, Ա. Մանդինյան, Ա. Արմենյան, Վ. Փափազյան, Հ. Արևելյան և ուրիշներ), հիմնականում օգտվելով ֆրանսերեն կամ ռուսերեն հրատարակություններից:

Հետաքրքրական է, որ տարբեր թարգմանությունների մեջ Շեքսպիրը խոսել է նաև հայկական զանազան բարբառներով՝ Նոր-Ջուղայի, Պոլսի, Նոր-Նախիջևանի և Թիֆլիսի, մի հանգամանք, որ նպաստել է Շեքսպիրի առավել ժողովրդականացմանը հայ իրականության մեջ:

Մովսեսական շրջանում ավելի ընդլայնվեց շեքսպիրյան հրատարակությունների գործը, չրտեսնված չափերի հասավ տպաքանակը: Հատկապես 30-ական թթ. սկսած Ե. Զարենցի նախաձեռնությամբ, հրատարակվեցին և վերահրատարակվեցին Մասեհյանի բոլոր տպագրված թարգմանությունները, 40-ական թթ. արդեն հրապարակ եկավ Խաչիկ Դաշտենցը, որը թարգմանեց մինչ այդ չթարգմանված մի շարք երկեր, վերստին անդրադարձավ այն ողբերգություններին, որոնք հայտնի էին ընթերցողին հատվածաբար կամ գտնվում էին ձեռագիր վիճակում: Եթե նախասովետական տարիներին շեքսպիրյան երկերը մեծ մասամբ զետեղվում էին պարբերական մամուլում, և հատուկենտ էին առանձին հրատարակությունները, ապա այժմ լույս են տեսնում հատորներով: Հրատարակվեցին նաև Շեքսպիրի սոնետները առան-

ձին դորով, ինչպես և շեքսպիրյան աֆորիզմների հատուկ մի ժողովածու:

* *

Ենթադրություններ կան, որ եվրոպական գաղութներում ապրող հայ առևտրական-մտավորականները, դեռևս մեծ դրամատուրգի կենդանության օրոք, կարող էին Լոնդոնի թատրոններում ականատես լինել Շեքսպիրի պիեսների բեմադրությանը: Համենայն դեպս, հայտնի է մի փաստ. 1586 թ. հայ վաճառական Փիրզադա Բաստամյանցը Հանգեզուրի Գետափ գուղից հասել է Լոնդոն, իսկ XVII դարում «Մադիկ գիտելյաց» խորագրով մի ժողովածուի մեջ արդեն հիշատակված է մեծ դրամատուրգը: Հայ ազգային-ազատագրական շարժումների խոշոր գործիչ Շոփակի էմինը, որ XVIII դարի կեսերին ուսանում էր Լոնդոնում, «Լեմ կյանքն ու արկածները» հուշագրերում բազմիցս հիշատակում է Շեքսպիրի անունը, իր կյանքի այս կամ այն դրվագը համեմատում «Օթելլո» և «Էմմանուելի վաճառականը» պիեսների գործող անձանց հետ: Նրա մի նամակից պարզվում է, որ անձամբ ծանոթ է եղել անգլիացի հուշակալուր ողբերգակ արտիստ Դավիթ Բարրիկին: Հետևաբար, կասկած չի հարուցում նաև այն փաստը, որ նա տեսած պետք է լինի շեքսպիրյան ներկայացումների մեծ դրամատուրգի հայրենիքում, այն էլ՝ Բարրիկի մասնակցությամբ:

Շեքսպիրի առաջին գիտական գնահատության փորձը կատարել է Բեյլինսկու ուսանողական ընկեր Սարգիս Տիգրանյանը՝ 1834 թ. Մոսկվայում հրատարակված Ժ. Ռասինի «Եվրոպիա» ողբերգության հայկական թարգմանության առաջաբանում: Տիգրանյանի բնութագրությամբ ոչ որ չի հասել Շեքսպիրին «լիզվի քաջավար-մության մեջ», «դեռևս ոչ որ չի կարողացել մարդկային ոգին արտահայտել այդպիսի բազմակողմանիությամբ, ցույց տալով և՛ կիրքը, և՛ վսեմությունը, և՛ թախծագիտը, և՛ զվարթում:

Շեքսպիրագիտությունը հայ իրականության մեջ միաժամանակ դուզորդել է թարգմանությունների և դերակատարումներին: այդ կերպ ընդլայնվել են հասկացողությունները, ստեղծվել է լայն ընկալման հնարավորություն: Այսպես, «Լեոմեոն և Ջուլիետ» ողբերգության թարգմանիչ Ա. Տետեյանը, ձգտելով ընթերցողին ինչպես հարկն է ծանոթացնել Շեքսպիրին՝ գրքի առաջաբանում անդրադառնում է հեղինակի ստեղծագործությանը առհասարակ, տալիս նրա կենսագրությունը, բերում մի հատված Ա. Դյումայի ուսումնասիրությունից: «Մակբեթ» անդրանիկ թարգմանության մեջ տեղ է գտել գերմանացի նշանավոր շեքսպիրագետ-

թարգմանիչ Շլեգելի գնահատականը այդ ողբերգության մասին: Առաջին անգամ լույս տեսած «Օթելլո» գրքին կցված էին ընդարձակ առաջաբան և ծանոթություններ, որոնց շնորհիվ հայ ընթերցողը կարող էր գաղափար կազմել Գերվիլուսի, Բեն Զոնսոնի, Կարլայլի, ինչպես նաև Ն. Կարամզինի կարծիքների մասին՝ Շեքսպիրի ժառանգության նշանակության վերաբերյալ: Նույնը կատարել է և Վ. Սուրենյանցը՝ իր թարգմանություններին իրեն ծանոթագրություն ավելացնելով կերպարների սեփական մեկնարանությունը: Էլ շենք նշում է. Մասնականին, որն իր առաջաբաններում և ծանոթագրությունների մեջ, զանազան առիթներով, հիշատակում է շուրջ հարյուր շեքսպիրագետի անուն: Կասկածից դուրս է, որ Շեքսպիրի լավագույն հայ թարգմանիչը ժամանակի լավագույն հայ շեքսպիրագետն է եղել:

Նույնը պետք է ասել և դերասանների մասին: Պ. Աղամյանի «Շեքսպիր և յուր «Համլետ» ողբերգության աղբյուրն ու քննադատությունները» (1887) և Սիրանուշի «Ջեոնարկս՝ Շեքսպիրի մի գործին» (1907) ուսումնասիրությունները վկայում են շեքսպիրագիտական մասի բարձր մակարդակը նախասովետական տարիներին, եթե սրանց ավելացնելու լինենք նաև հայ դասական գրականության սյուների Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Հ. Հովհաննիսյանի, Ավ. Իսահակյանի և մյուսների ջանքերը, որոնք բազմաթիվ էջեր են նվիրել Շեքսպիրի գնահատությանը, ապա պատկերը ամրոցական կդառնա:

Սովետական տարիներին Շեքսպիրի ուսումնասիրությունը ստացավ պարբերական ընդլայնում: Սուրխաթյանն ու Ս. Հակոբյանը, Հ. Մամիկոնյանն ու Ս. Սողոմոնյանը մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ նվիրեցին մեծ դրամատուրգին, Ե. Չարենցն ու Դ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցն ու Ն. Ջալալյանը և Լի Ռիշնեյ իրենց խոսքն ասացին, «Շեքսպիրն ու հայ իրականությունը» թեման բազմակողմանի լուսաբանություն ստացավ Վ. Թերզիբաշյանի և Ռ. Ջալալյանի, Լ. Քալանթարի և Ա. Աղամյանի, Հ. Եյուլիքեյանի և Ս. Մելիքսեթյանի, Լ. Սամվելյանի և Ս. Հարությունյանի, ինչպես և մի շարք այլ թատերագետների աշխատություններում: Ինքնակազմողներն էլ իրենց ավանդը բերին հայ շեքսպիրագիտության մեջ՝ Վ. Փափազյանի, Ա. Բուրջալյանի, Վ. Վաղարշյանի և բեմի այլ մշակների գրավոր աշխատություններով: Հրապարակվեց պատկերագրական բրյույթի հարուստ նյութ:

Շեքսպիրի և հայ իրականության ստեղծագործական կապերի ուսումնասիրությունը այսօր էլ ընթացքի մեջ է:

* * *

Հայ թատրոնը հաղորդակից է եղել Ներսիսյանի ղեկավարությանը և կապված է Վենետիկյան Միաբանության հետ, որը, ուղիղ հարաբերություններով, բնական է բարձրացվել «Մակբեթ» (դժգույն փոփոխություններ ու կրճատումներով) 1866 թ., Ներսիսյանի մահվան 250-ամյակի օրերին, հայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիր Գևորգ Չմշկյանը Ռիֆլիսում իր խաղամանությունում բնական է հանում «Վենետիկյան վաճառական» կոմեդիան, ինքն էլ ստանձնում Շալոկի դերը։ Մի տարի անց, այս անգամ Պոլսում, արևմտահայ բնակչության ակադեմիայի գործիչ Հակոբ Վարդուկյանը բնագործում է «Մակբեթ», միաժամանակ պատկերելով գլխավոր հերոսին։ Մեզանում Ներսիսյանը ըստ ամենայնի հայտնաբերվելու, «տիրանայում» փաստոր դերասանական մեծ անհատականությունների սխրագործությունների արգասիքն էր, կապված նախ և առաջ Պետրոս Աղամյանի անվան հետ, որը 1880 թ. Ռիֆլիսում հանդես եկավ Համլետի դերով և այնուհետև հաջորդաբար ստեղծեց Օթելլոյի և Լիրի կերպարները։ Հայ բնագործների պատմության մեջ դա նույնպիսի մի թույլ էր, ինչպիսին եղան Մասնահայրի թարգմանությունները մի տասնամյակ անց։ Նրա ստեղծած հերոսներն ազատատենչ ընդլայնումներ ունեին, վեհ ու ազնիվ հոգի, կրում էին իրենց մեջ մարդու և մարդկային բարձրագույն հատկանիշները։ Աղամյանը չպարփակվեց լուր հայ իրականության մեջ։ Նա շերտապես կերպարներով հանդես եկավ Ռուսաստանի գրեթե բոլոր աչքի ընկնող թատերերում, այդ թվում՝ Մոսկվայում, Պետերբուրգում, Օդեսայում, ամենուրեք առաջ բերելով մեծ հիացմունք և արժանանալով ամենուրեք գնահատության։

Աղամյանի մահից հետո, 90-ական թթ. սկրսած, Ներսիսյանի ստեղծագործության ժողովրդականացմանը նպաստեցին երեք նշանավոր արտիստ, երեքն էլ Աղամյանի խաղընկերներից՝ Գ. Պետրոսյանը, Սիրանուշը և Հ. Արելյանը։ Գերասանները գերադասեցին Օթելլոն ու Լիրը, դերասանուհին հանդես եկավ Համլետի դերով (1901)։

Սիրանուշը հիմնականում կանգնած էր Աղամյանի ստեղծած բնական տրագիդիայի վրա։ Շուրջ րոպե տարի նա հանդես եկավ Համլետի դերով, իր շուրջն ունենալով Արելյանի, Զարիֆյանի, Փափազյանի, Ս. Աղամյանի, Օ. Սևումյանի, Բ. Ալիսանյանի նման տաղանդավոր խաղընկերներ, որոնցից շատերը հետագայում մյուս թատրոնների հասցրին շերտապես դրա-

մատուցիչի յուրացումը հայ թատրոնում։ Արելյանը Օթելլոյի և Լիրի կերպարներով շրջեց (1921—1924) Փոքր Ասիայի, Նվրոպայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բազմաթիվ հայաշատ քաղաքներ, բարձրացնելով հայ բնագործների հեղինակությունը։ Արելյանը հավատարիմ մնաց Ներսիսյանի նաև սովետական հայ բնագործ, մոտ տասը տարի նա խաղալով Օթելլոն և Լիր։

Սակայն նոր ժամանակաշրջանի շերտապես խաղացանկը ավելի կապված է մի այլ վարպետի՝ Վահրամ Փափազյանի անվան հետ, որը ղեկավարեց «Հին» բնագործ հանդես էր եկել Ռոմեոյի, Համլետի և Օթելլոյի դերակատարումներով։ Փափազյանն էլ, իր երկու նախորդների պես, շատանափակվեց հայ իրականության շրջանակներում։ Նա դուրս եկավ լայն հորիզոն, շրջեց Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքներում, Մոսկվայում (Փոքր թատրոնի խմբի հետ) խաղաց Օթելլո, մեկնեց Փարիզ՝ որպես սովետական արվեստի պատվիրակ։ Սովետական տարիներին նա իր խաղացանկը հարստացրեց Մակբեթ և արքա Լիր դերակատարումներով, որոնցից առաջինը, Օթելլոյից հետո, առանձնահատուկ տեղ ունի շերտապես տրագիդիաներով ճոխ հայ թատրոնի պատմության մեջ։ Փափազյանը Օթելլո խաղում է ահա հիսունվեց տարի անընդմեջ, իսկ կատարումների թիվը վաղուց անցել է երեք հազարից։ Ընկալած այդ պատկանելի գործունեությանը, Փափազյանը միակ շերտապես դերասանը չէ ժամանակակից հայ բնագործ։ Նրա կողքին մենք ունեցել ենք Հրաչյա Ներսիսյան, որի Օթելլոյի գնահատությանը բազմաթիվ էջեր է նվիրել ռուս խոշոր քննադատ Յու. Յուզովսկին, որի Զուլտաֆը («Վինձորի գլխավորներ կանայք») Սովետական անվան թատրոնի նվաճումներից է։ Մենք ունեցել ենք Վաղարշ Վաղարշյան, որը Համլետի կատարումը Հայրենական մեծ պատերազմի օրերին իր ինքնօրինակ մեկնարանություններով՝ երևույթ էր սովետահայ թատերական կյանքում։ Մեր անվանի դերասանուհիներ Հասմիկը, Օ. Գուլազյանը, Ա. Ոսկանյանը, Ժամանակահատվածի տարիներին նոր ավելանում շարունակեցին հանդես գալ շերտապես խաղացանկում։ Արմենյանն ու Մանվելյանը, հավատարիմ մնալով Ներսիսյանին, բնական են հանեցին Շալոկը և Նույն հաջորդությամբ շարունակեցին «մնալ» Յագուրի, Զորարյանը, Մ. Խանյանը, Հ. Խաչանյանը, Գ. Զանիրյանը, Ա. Ավետիսյանը և ուրիշներ ստեղծեցին շերտապես մի շարք կերպարներ։

Սովետական տարիներին առաջին անգամ բնագործարարացան «Տասերկուերորդ գիշերը», «Ամառային գիշերվա երազը», «Սխալների կոմեդիան», «Զմեռային հեքիաթը»։ Նոր ու ժամա-

նակակից մեկնարանություն ստացան «Ոթելուն», «Համլետ», «Կամակոր կնոջ սանձահարումը» և «Վենետիկի վաճառականը»։ Գլխավորն այն է, որ ժամանակակից հայ բեմում յուրաքանչյուր դերակատար յուրովի էր մեկնարանում Շերսպիրին, ամեն մի ուժիսյոր ու բեմականիչ ձգտում էր վերհանձնել մեծ դրամատուրգին, նրա ստեղծագործության մեջ տեսնելով և ընդգրծելով վառ կենսասիրությունը, անհատի ազատության գաղափարը, ժողովրդայնությունը։ Այս գործին եկան նպաստելու պրոֆեսիոնալ հայ ռեժիսորան և բեմականացությունը Ռեժիսորներ Ս. Քափանականն ու Լ. Քալանթարը, և Բուրջալյանն ու Ա. Գուլաչյանը, Վ. Աճեմյանն ու Տ. Շամիրսանյանը ստեղծեցին բեմադրու-

թյուններ, որոնք հարստացրին շերսպիրական հայ թատրոնում, մանավանդ որ նրանք իրենց կողքին, տաղանդավոր արտիստներին զատ. ունեին այնպիսի «օգնականներ», ինչպես կոմպոզիտոր Լև. Սպենդիարյանը, և. հաշտրյանը և այնպիսի բեմականացիներ, ինչպես Գ. Յակովլովը, Մ. Արուստյանը, Մ. Սվախչյանը և Ա. Սարգսյանը։

Հայ արվեստագետները Շերսպիրին բեմադրեցին այնպես, որ նա դարձավ մեր ժողովրդի կրած տառապանքների, նրա երազանքների, սիրագործության ու հավատի հարազատ թարգմանը։ Ահա թե ինչու նա անբաժան է մեզնից։

Խ. ԼԵՎՈՆՅԱՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱՆԻ ԹՅՈՒՆՆԵՐ

Պատկերային Ջարեհ Գ. ԿԻՆԻՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԵՐԸ։ ՎԵՆԵՆԱ. ՄԻԽԱՅԻՐ-
ՅԱՆ ԽԱՂԱՐԱՆ, 1963, XXXII, 406, XLVIII էջ։

Այս գիրքը, որ Պատկերային բաղամասյա ուսումնասիրությունների արդյունքն է, 1962 թ. Ամերիկյան դրամագիտական ընկերության հրատարակությամբ լույս է տեսել անգլերեն լեզվով և ապա հեղինակի կողմից թարգմանվել հայերեն, Հեղինակը անձամբ կամ նմանահասկությունների միջոցով ուսումնասիրել է Վենետիկի և Վենետիկի Միխայիլյանների մոտ գտնված դրամաների հարուստ ֆունդում, Փարիզի ազգային գրադարանի հայկական դրամաների, Բրիտանական թանգարանի դրամագիտական բաժնի, Բեյրութի հայ ազգային մշակութային միության, Հայաստանի պետական թանգարանի, Լեհիստոնի առիական թանգարանների և էրմիտաժի, Պոլսի հնագիտության թանգարանի, ինչպես նաև բաղամասի անհատական հավաքածուներում եղած Կիլիկյան Հայաստանի դրամաները։

Գրքի սկզբում զետեղված են հայերեն և ասոր լեզուներով աղբյուրների մասնագործությունը և համառոտագրությունների աղբյուրական ցանկը։

Ռուբինյան դրամաների մասին գրված ուսումնասիրությունների վերաբերյալ համառոտ ակնարկին հաջորդում է ներածությունը, որ խոսվում է Կիլիկիայում հայերի հաստատման և Կիլիկյան հայ թագավորության մասին։ Հետաքրքիր են ուսումնասիրության «Կիլիկիոյ վաճառականությունը», «Ջանազան դրամաներու համար գործածված հայերեն անուններ», «Ռուբինյան իշխանության դրամաները», «Ռուբինյան դրամաներու ձևը և պատկերաթիվը», «Ոսկի դրամաները», «Թագավորներու դրամաները», «Ռու-

բինյան դրամաներու հավաքածուներու պատմությունը» հատվածները։

Դրամաների կորագույր, որը գրքի ամենածավալուն մասն է (էջ 125—410), կազմված է ժամանակագրական կարգով։ Յուրաքանչյուր իշխողի կամ թագավորի դրամաների առաջին կողմի ընթերցվածի տակ տրված է երկրորդ երեսի գրությունը։ Հնարավոր զեպքում նշված են դրամի ծանրությունը, արժաթի պատկանատիվները, դրամի որտեղ գտնվելը և այլ տեղեկություններ։ Աշխատությունն օժտված է զանազան սեանդակ ցանկերով՝ դրամաների խորագրերի ցանկ (էջ 410—489), հատուկ անունների աղբյուրական ցանկ (էջ 491—496) և այլն։ Գրքի վերջում՝ I—XLVIII էջերում զետեղված են Կիլիկյան Հայաստանի դրամաների նմանահասկությունները։

Հրատարակ. Արմեն. ՓԱՌԱՆՁԵՄ
ԹԱԳՈՒՂԻ ՎԵՆԵՏԻԿ, Մ. Պաղար, 1962, 66 էջ։

Սիյուստրահայ պատմաբան Հ. Արմենը իր աշխատության 8 գլուխներում եկարագրում է IV դ. հայ ժողովրդի պատմության այն տարիների զեպքերը, որոնք կապված են Սյունյաց իշխանուհի Փառանձեմի կյանքի, գործունեության և մահվան հետ։

Հեղինակը հետևյալ խոսքերով է եզրափակում իր ետադարանը. «Փառարար է, որ ընթերցողը հետադա տողերը կարդա որպես պատմական հավաստի էջ մեր շրջապատի պարտաւանի կյանքին, և ոչ թե որպես վիպական մարգարե» (էջ 6)։

«Փորձիկ իշխանուհին» խորագրով առաջին գլխում Հ. Արմենը աշխատում է համառոտակի բնութագրել 4-րդ դարի Հայաստանի իրավի-